

չունենալուն համար թերեւս, եկեղեցւոյն աջ կողմն այրերուն տուած է եւ ձախն կիներուն... Ո՞վ կարող է պնդել, թէ մեր երեսփոխանական ժողովն ալ այնպէս վարուած չէ. թո՛ղ չարամիտներն պարզամիտ ժողովրդեան հաւատացնել ուզեն, թէ երեսփոխանական ժողովն միայն կիները ներս առած է եւ այրերը դուրս ձգած է. ես չեմ հաւատար:

Ս. Աստուածածնայ եկեղեցւոյն դէմն է Թարգմանչաց վարժարանն, որ շատ կանոնաւոր խեղճութեան մէջ կգտնուի, եւ եթէ ոչ իւր խեղճութեամբը, գոնէ իւր կանոնաւորութեամբը կարող է ազգային Վարչութեան նախանձը շարժել: Շատերը կգարմանան, թէ ասանկ հարուստ թաղի մը վարժարանն ինչո՞ւ աղքատ մնայ: Ես չեմ գարմանար: Վարժարանն անոր համար աղքատ է, որովհետեւ թաղին մէջ հարուստներ կան:

Գիւղիս մէջ կայ Հոփսիսիմեանց վարժարան մը, որ խնամակալուի տիկիներու տնօրէնութեան տակ կկառավարուի եւ յոյս կու տայ, որ օր մը ուսեալ եւ կրթեալ աղջիկներ դուրս պիտի տայ: Սոյն վարժարանին սանուհիները բաւական յաջողութեամբ կը թարգմանեն գրաբարէ աշխարհաբար, եւ եթէ Սովեւոց Յանձնաժողովոյ ատենադպիրին գրաբար նամակները չեն կրնար լուծել՝ յանցանքն իրենց չէ, վասնզի իրենց դասատուն անգամ շատ անգամ ըղեղը կպատառէ՝ այդ նամակներէ իմաստ մը հանելու համար:

–Պ. Շաշեան, որ Հայաստանի մէջ սովու պատճառած աղէտքներուն վրայ ժողովրդեան գուրջը շարժելու եւ անկէ նուէր հաւաքելու նպատակաւ նամակներ կիրատարակէ լրագիրներու մէջ՝ հասարակութեան անհասկանալի լեզուով կխմբագրէ իւր սաւառնաթեւ նամակները, որպէսզի մեր ազգայիններն իրենց եղբայրներուն տառապանքներն իմանալով չտխրին եւ չլան: Այս տեսակով Պ. Ատենադպիրն ազատ էր լատիներէն ալ խօսիլ ժողովրդեան...:–

Աղջիկներու վարժարան մ'ալ կայ, գոր *Ազգանուէր Հայուհեանց ընկերութիւնը* բացած է՝ աղքատ աղջիկներու ձրի դաստիարակութիւն տալու համար: Կարողութիւն եւ յաջողութիւն կմաղթենք սոյն ընկերութեան ազնուասիրտ տիկիներուն, որ ամեն ջանք ի գործ կդնեն իրենց նպատակին հասնելու համար... Եթէ այս կիներն այր, եւ իրենց այրերը կին ըլլային՝ անշուշտ Թարգմանչաց վարժարանն այսպէս դժբախտ տեսնելու դժբախտութիւն չէինք ունենար:

Լուսաւորչեան վարժարանն գոհացուցիչ է առ այժմ, սակայն միշտ հսկումի պէտք ունի, որ անընդհատ յարատեւէ իւր կանոնաւորութեանը մէջ: